2017, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (487)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*1 հունիսի*

### ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանին:

Շնորհավորելով վերանշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ու օրհնությունը բերեց պրն Աշոտ Մանուկյանին՝ հայցելով, որ Տերը շնորհազարդի եւ զորացնի նրան՝ իր պարտականություններն արդյունավետ կերպով իրականացնելու՝ ի նպաստ հայրենիքի շինության եւ առաջընթացի:

Զրույցի ընթացքում խոսվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից իրականացվող սոցիալական, բարեգործական, ինչպես նաեւ բնապահպանական տարբեր ծրագրերի մասին:

Անդրադառնալով Մայր Աթոռի տարածքում կառուցվող արեւային ֆոտովոլտային կայանին՝ նախարարը նշեց, որ այն առաջիններից մեկը կլինի Հայաստանում: Բնապահպանական առումով կարեւորելով Ս. Էջմիածնի կողմից ձեռնարկված քայլը՝ նա ընդգծեց նաեւ, որ այս ուղղությամբ Մայր Աթոռի հետ համագործակցությունը շարունակական բնույթ կունենա:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:



*2 հունիսի*

### ԱՄՆ-ի «Ֆերահյան» հայկական դպրոցի աշակերտներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի «Ֆերահյան» հայկական դպրոցի 11-րդ դասարանի թվով 40 աշակերտի:

Անդրադառնալով նրանց այցին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Սփյուռքում գործող հայկական տարբեր վարժարանների ու դպրոցների ավարտական դասարանների աշակերտների այցելությունը հայրենիք եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին գեղեցիկ ավանդույթ է դարձել:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այս այցն իր անջնջելի կնիքն է թողնելու պատանիների հոգում եւ առիթ է դառնալու, որպեսզի վերջիններս ներշնչվեն ու զորանան հայրենիքով ու նրա սրբություններով:

Շրջանավարտներին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ջանասիրությամբ շարունակել իրենց ուսումը եւ կյանքում արձանագրել նորանոր ձեռքբերումներ:

Վեհափառ Հայրապետը կարեւոր նկատեց, որ հայորդիներն ապագայում եւս այցելեն Հայաստան՝ հայրենիքի հանդեպ իրենց սերը զորացնելու:

Այնուհետեւ «Ֆերահյան» հայկական դպրոցի տնօրեն Սոսի Շանլյանը Նորին Սրբությանը ներկայացրեց դպրոցի ուսումնական գործունեությունը:

Վերջում Նորին Սրբությունը դպրոցի աշակերտներին Բարձրյալն Աստծո հովանավորությունն ու առաջնորդությունը մաղթեց՝ ի կատար ածելու իրենց նպատակներն ու իղձերը եւ ազգային ոգու բարձր գիտակցությամբ իրենց գիտելիքները ծառայեցնելու հայրենիքին եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդին:



*9 հունիսի*

### Ավստրալիայի Վիլուպի քաղաքապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայի Վիլուպի քաղաքապետ Քեյլ Չայլզ Քիտնիին:

Հանդիպմանը ներկա էին Եկեղեցականներկայացուցչական ժողովի առիթով Մայր Աթոռ ժամանած Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ, Հնդկաստանի ու Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ Հայկազուն եպս Նաջարյանը եւ թեմի ներկայացուցիչներ:

Հայկազուն սրբազանը Նորին Սրբությանը ներկայացրեց Վիլուպի քաղաքապետի հայանպաստ գործունեությունը՝ մասնավորապես ընդգծելով քաղաքապետարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործում վերջինիս ունեցած կարեւոր դերակատարությունը:

Այնուհետեւ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց տիկին Քեյլ Չայլզ Քիտնիին: Նորին Սրբությունն իր ուրախությունն արտահայտեց Երեւանն ու Սիդնեյը քույր քաղաքներ հռչակելու առիթով՝ վստահություն հայտնելով, որ դա առավել եւս կնապաստի հայ-ավստրալական բարեկամական հարաբերությունների եւ երկու երկրների միջպետական կապերի ամրապնդմանը: Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Ավստրալիա կատարած իր հովվապետական այցերին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ ականատեսն է եղել հայ համայնքի ծաղկուն կյանքին, ինչպես նաեւ այն ջերմ ու հարգալից վերաբերմունքին, որին Ավստրալիայում արժանանում են հայ ժողովրդի զավակները:



Իր հերթին Վիլուպի քաղաքապետ Քեյլ Չայլզ Քիտնին խոսեց հայ համայնքի մասին, կարեւորեց նաեւ քաղաքների միջեւ ձեւավորվող գործակցությունը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց Ավստրալիայի ժողովրդին՝ հայցելով, որ երկնավոր Տիրոջ օրհնության ներքո միշտ ապրի խաղաղության ու բարօրության մեջ:

*11 հունիսի*

### Մի խումբ ուխտավորների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի արեւելյան եւ արեւմտյան, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմերի ուխտավորներին:

Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց ուխտավոր հայորդիներին եւ նրանց հոգեւոր հովիվներին՝ ուրախություն հայտնելով, որ ուխտի են եկել համայն հայության հոգեւոր կենտրոն, որը դարեր շարունակ հային կապել է հայրենի հողին, իր խորհրդով հույս ու հավատ ներշնչել, կերտել ու փրկել նրա հոգին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ հովվապետական այցելությունների ժամանակ մշտապես տեսել է ամերիկահայ եւ ավստրալահայ համայնքների զորավոր հավատքը եւ անվերապահ սերն ու նվիրումը համայն հայության սրբություն սրբոցի եւ Հայոց Հայրապետի նկատմամբ:

Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց ուխտավորներին, որ Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելությունը կկերպարանափոխի նրանց հոգին եւ նոր ներշնչանքի աղբյուր կդառնա՝ հայրենիքով առավել զորացած վերադառնալու իրենց երկրները եւ շարունակելու իրենց ազգանվեր ու եկեղեցասեր ընթացքը:

*Շարունակությունը՝ էջ 2*

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

### Մի խումբ ուխտավորների



*Սկիզբը՝ էջ 1*

Վերջում Նորին Սրբությունն իր աղոթքն ու մաղթանքները փոխանցեց ամերիկահայ եւ ավստրալահայ համայնքներին՝ հայցելով, որ Աստծու օրհնության ներքո ապրեն խաղաղ եւ ապահով, պահպանեն հայրենի ժառանգությունը եւ ավելի շենացնեն իրենց համայնքային կյանքը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններին եւ Սփյուռքի առջեւ ծառացող զանազան մարտահրավերներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

*12 հունիսի*

## «Ռոսատոմ» կորպորացիայի գլխավոր տնօրենին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչյովին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց Հայաստանի ու հայ գիտնականների հետ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գործակցությունը՝ ողջունելով Հայաստանի ատոմակայանի սպասարկման ու արդիականացման գործում վերջինիս կողմից մատուցվող օգտակար ծառայությունը:

Անդրադառնալով երկու ժողովուրդների եղբայրական կապերին՝ Գարեգին Բ Կաթողիկոսը գոհունակությամբ նշեց, որ դարերի ընթացքում ձեւավորված բարի ավանդույթներն այսօր էլ շարունակվում են միջպետական հարաբերությունների բարձր մակարդակով, ինչպես նաեւ հատկանշվում միջեկեղեցական եւ այլ ոլորտներում արձանագրվող սերտ համագործակցությամբ:

Խոսելով աշխարհում ատոմային էներգիայի գործածության մասին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այն կարող է ծառայեցվել ինչպես մարդկային կյանքի բարօրությանն ու առաջընթացին, այնպես եւ կործանարար նպատակների: Այս առումով Նորին Սրբությունը բարձր գնահատեց «Ռոսատոմի» գործունեությունը՝ ուղղված ատոմային էներգիայի անվտանգ ու ապահով օգտագործմանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Միացյալ Թագավորության վարչապետին

Հունիսի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության վարչապետ Թերեզա Մեյին՝ Լոնդոնում տեղի ունեցած ահաբեկչական հարձակումների կապակցությամբ, որոնց հետեւանքով զոհվել են անմեղ անձեր, վիրավորվել տասնյակ քաղաքացիներ:

Նորին Սրբությունը Միացյալ Թագավորության վարչապետին եւ ժողովրդին փոխանցել է Հայոց Եկեղեցու եւ նրա բարեպաշտ հավատացելոց սրտակցությունն ու զորակցությունը:

*«Ահաբեկչությունը հակառակ է Աստծո կամքին: Չկա որեւէ կրոն, ուսմունք կամ արժեքային համակարգ, որ արդարացնի ատելությունը, թշնամանքը եւ բռնությունը այլոց նկատմամբ, խրախուսի հույսերով առլեցուն մարդկային կյանքի ընդհատումը: Մենք խստորեն դատապարտում ենք կատարվածը եւ հույս հայտնում, որ հանդիման այս սոսկալի երեւույթի՝ քաղաքակիրթ աշխարհը կմիավորի իր ջանքերը՝ հանուն խաղաղության ու մարդկության անվտանգ կյանքի»*,- նշված է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուտափույթ ապաքինում է մաղթել վիրավորներին, Սուրբ Հոգու մխիթարություն՝ զոհվածների ընտանիքներին եւ Միացյալ Թագավորության ողջ ժողովրդին: Հայոց Հայրապետը Երկնավորի հովանին ու զորակցությունն է հայցել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության իշխանություններին՝ հաղթահարելու այս չարիքը եւ ապահովելու աստվածասեր ժողովրդի խաղաղ, ստեղծագործ կյանքը:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Իրանի Իսլամական Հանրապետության նախագահին

Հունիսի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիին՝ Թեհրանում տեղի ունեցած ահաբեկչական հարձակումների հետեւանքով անմեղ զոհերի եւ վիրավորների կապակցությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետը, դատապարտելով ահաբեկչական գործողությունները, Հայ Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատացելոց անունից զորակցություն է հայտնել Իրանի բարեկամ ժողովրդին՝ Բարձրյալի մխիթարությունը հայցելով զոհվածների ընտանիքներին:

Նորին Սրբությունը Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին ուժ եւ կորով է ցանկացել՝ ստեղծված դժվարին կացության հաղթահարման եւ Իրանի խաղաղասեր ժողովրդի կյանքը խաթարող նման ոճրագործությունների կանխարգելման գործում:

## Ս. Հռիփսիմյանց կույսերի տոնը

Հունիսի 12-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնեց ս. Հռիփսիմյանց կույսերի հիշատակը: Տոնական այս օրը նաեւ Ս. Հռիփսիմե վանքի ուխտի օրն է, երբ Մայր Աթոռից Ս. Հռիփսիմե վանք է տարվում սրբուհու մասունքն ամփոփող Աջը:

Առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եկեղեցականների թափորը, Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, շարժվեց դեպի Ս. Հռիփսիմե վանք: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասունքակիր ս. Աջով օրհնեց բարեպաշտ ժողովրդին, ապա Ս. Գրիգոր Լուսավորչի կամարի առջեւ այն փոխանցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանին:



Ս. Հռիփսիմե վանքի առջեւ թափորը դիմավորեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը՝ վանքի հոգեւոր սպասավորների ու բազմաթիվ ուխտավորների հետ:

Վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Համբարձում աբղ. Արաբյանը:

Պատարագի ընթացքում հայր սուրբն անդրադարձավ Հռիփսիմյանց կույսերի կյանքին ու նահատակության պատմությանը, Քրիստոսի եւ քրիստոնեական հավատի հանդեպ դրսեւորած հավատարմությանն ու նվիրումին:

Հայր Համբարձումը հորդորեց հավատացյալներին աղոթքով հայցել կույսի բարեխոսությունը մեր հայրենի երկրի ու հայ ընտանիքների համար, որպեսզի կարողանան հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները եւ շարունակել խաղաղության մեջ ապրել եւ արարել:

Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Արտակ եպս Տիգրանյանի, ս. Աջով կատարվեցին հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններն ու տարբեր թեմերից հոգեւոր հովիվների առաջնորդությամբ ժամանած ուխտավորներ:

## Ս. Գայանյանց կույսերի տոնը



Հունիսի 13-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնեց ս. Գայանյանց կույսերի հիշատակը:

Առավոտյան Մայր տաճարից եկեղեցականների հանդիսավոր թափորն ուղղվեց դեպի Ս. Գայանե վանք՝ ուխտավորների ուղեկցությամբ վանք տանելով Մայր Աթոռում պահվող սրբուհու մասունքակիր Աջը: Այս առիթով օրհնելով ներկա բարեպաշտ ժողովրդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այնուհետեւ Աջը փոխանցեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս Հովակիմյանին:

Ս. Գայանե վանքի առջեւ թափորը դիմավորեցին վանքի հոգեւոր սպասավորները եւ բազում ուխտավորներ՝ վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի գլխավորությամբ:

Սուրբ Գայանե վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Ս. Գայանե վանքի վանահայր Կորյուն աբղ. Առաքելյանը:

Ներկայացնելով սուրբ Գայանեի եւ մնացյալ կույսերի նահատակության պատմությունը՝ հայր Կորյունը մասնավորաբար անդրադարձավ կույսերի դրսեւորած քաջ ոգուն եւ անսասան հավատին, հորդորեց հետեւել նրանց օրինակին: Պատարագիչ հայր սուրբը հայցեց նաեւ սուրբ Գայանյանց կույսերի բարեխոսությունը՝ հայ ժողովրդի, Հայոց Եկեղեցու եւ հայրենիքի պայծառության ու բարօրության համար:

Պատարագի ավարտին կատարվեց Անդաստանի կարգ: Ապա տոնական օրվա առիթով «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տան սաները հանդես եկան ազգային երգերի կատարումներով:



# Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունիսի 6-ին, բարձր նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր քառօրյա աշխատանքն սկսեց Եկեղեցական-ներկայացուցչական 6-դ ժողովը, որին մասնակցում էին Մայր Աթոռում եւ նվիրապետական աթոռներում պաշտոնավարող եպիսկոպոսներ, Հայաստանի եւ Սփյուռքի թեմերի առաջնորդներ, առաջնորդական տեղապահներ, հայրապետական պատվիրակներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Նվիրապետական Աթոռներից, հայրապետական պատվիրակություններից ու աշխարհասփյուռ թեմերից ընտրված հոգեւորական եւ աշխարհական ներկայացուցիչներ:

Մինչ ժողովն այս առիթով Մայր Աթոռ ժամանած շուրջ 150 պատգամավորները, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, միաժամանակ Մայր տաճարում մասնակցեցին Արեւագալի ժամերգությանը:

Այնուհետեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Տերունական աղոթքով մեկնարկեց ժողովը: Բացման խոսքով հանդես եկավ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, Հայաստանի աստվածաշնչային ընկերության գործադիր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը, ապա հրավիրեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր հայրապետական օրհնությունն ու պատգամը փոխանցելու ժողովի մասնակիցներին:



## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

*Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական Տեղապահ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպ. Բեկչյան,*

*Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ Հայրեր եւ պատվարժան աշխարհական պատգամավորներ,*

*Ողջունում եւ բարի գալուստ ենք մաղթում ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին ձեր մասնակցության համար: Մեծապես գնահատում ենք ձեր ազնիվ հանձնառությունը եւ մանավանդ՝ եկեղեցական մեր կյանքը պայծառացնելու ձեր նախանձախնդրությունը, որով ձեր նվիրյալ ջանքերն եք բերում ի նպաստ մեր Սուրբ Եկեղեցու առաքելության արդյունավորման:*



*Եկեղեցական-ներկայացուցչական ժողովը կյանքի է կոչվել Ազգային-եկեղեցական ժողովի գումարումների միջանկյալ ժամանակահատվածում՝ քննարկելու եկեղեցական եւ ազգային մեր կյանքը հուզող խնդիրները: Գոհունակությամբ ենք արձանագրում, որ Եկեղեցական-ներկայացուցչական նախորդ՝ 2014 թվականի ժողովում մենք միասնաբար հաստատեցինք այս ժողովի կանոնադրությունը, որում սահմանված են նրա իրավասության շրջանակը, կազմը եւ կարեւոր մյուս հարցերը: Կանոնադրությունը գործադրության մեջ, բնականաբար, կարող է ենթարկվել ընթացիկ փոփոխությունների՝ թեմերից արդեն իսկ ստացվող առաջարկները նկատի առնելով: Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության ընդունումը էական քայլ է մեր Եկեղեցու ամբողջական կանոնադրությունը ստեղծելու եւ կյանքի կոչելու ճանապարհին: Այս ուղղությամբ կարեւոր ձեռքբերում է նաեւ թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի կազմումը, որը հանձնարարված է կիրառության 2009 թվականին գումարված Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կողմից:*

*Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի նախորդ գումարումներին Մենք քանիցս անդրադարձել ենք այն դանդաղաշարժությանը, որը դրսեւորվում է թեմական ուղենշային կանոնադրության ներդրման գործընթացում: Որոշ թեմերում զանազան պատրվակներով տակավին ձգձգվում է ուղենիշի սկզբունքներով կանոնադրությունների բարեփոխումը: Երբեմն շրջանառվում է այն անհիմն մտածումը՝ իբր Մայր Աթոռը հեռահար նպատակ է հետապնդում թեմերի ունեցվածքի առնչությամբ: Մերժելի է նաեւ երեւույթը, երբ թեմի թեմական-պատգամավորական ժողովն իրեն իրավունք է վերապահում մերժել Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի որոշումները: Թեմերը, իրենց պատվիրակների միջոցով մասնակցելով ժողովներին, ապա ներկայացնելով իրենց առաջարկներն ու տեսակետները, պարտավոր են անվերապահորեն ընդունել եւ կիրառել ղեկավարման ավելի բարձր ատյանի որոշումները: Թեմերի պատասխանատու եկեղեցական մարմիններն այլեւս վերջնական հանգրվանի պիտի հասցնեն ուղենիշին համաձայն թեմական եւ ծխական կանոնադրությունների կազմումն այն գիտակցությամբ, որ հոգեւոր-եկեղեցական կյանքի կանոնակարգման ցանկացած հապաղում կասեցնում է մեր Եկեղեցու առաջընթացը եւ խաթարում մեր ժողովրդի կյանքում Եկեղեցու տերունապատվեր առաքելության առավել արդյունավորումը: Անընդունելի այս երեւույթների առնչությամբ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովը պետք է վերաբերմունք արտահայտի եւ համապատասխան քայլերի վերաբերյալ որոշում կայացնի:*

*Այսօր Ձեր քննարկմանը պիտի ներկայացվի Ազգային-եկեղեցական ժողովի բարեփոխյալ կանոնադրության նախագիծը: Սույն կանոնադրության որդեգրումով Հայ Եկեղեցու բարձրագույն ատյանի գործունեությունը՝ իր լիազորություններով, կարեւոր նշանակություն է ունենալու եկեղեցական եւ համազգային հիմնախնդիրների լուծման եւ մեր ժողովրդի բարօր ապագան կերտելու օրհնյալ գործում: Կամոքն Աստծո՝ առաջիկայում պիտի ձեռնամուխ լինենք Եկեղեցու կանոնադրության մյուս գլուխների մշակման աշխատանքներին: Մենք վստահ ենք, որ Տիրոջ կամոք կարող պիտի լինենք կարգավորել կանոնադրական դաշտում մեր Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները՝ վերջնական նպատակ ունենալով մեր Եկեղեցին օժտել ամբողջական կանոնադրությամբ: Եկեղեցական մեր կյանքի հաստատումը կանոնադրական հիմքերի վրա արդյունավորություն է հաղորդելու մեր Եկեղեցու գործունեությանը, քաջալերելու է մեր ժողովրդի ներգրավվածությունը եկեղեցական կյանքում, ավելացնելու է վստահությունը եկեղեցական կառույցների նկատմամբ եւ ամրապնդելու է լավատեսությունը մեր վաղվա օրվա հանդեպ:*

*Կանոնադրությունները, որոնցով պիտի կարգավորվի եկեղեցական մեր կյանքը, ի մասնավորի՝ մեր Եկեղեցու վարչակառավարման ոլորտը, խարսխվում են ավետարանական պատվիրանների, սուրբ հայրերի հաստատած կանոնների, եկեղեցական մեր դարավոր ավանդույթի վրա՝ թելադրելով արդի պահանջներին համարժեք գործունեություն եւ ընթացքներ:*

*Եկեղեցական կյանքում կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար Մեր կողմից նախաձեռնվել է նաեւ խորհրդատվական աջակցության ծրագիր: Այն քանիցս քննարկվել է Գերագույն հոգեւոր խորհրդում եւ հավանության արժանացել: Ներկայումս ծրագրի ուղղությամբ աշխատում են հոգեւորական եւ աշխարհական 20 անձ՝ ինչպես Հայաստանից, այնպես եւ Սփյուռքից, ովքեր ձեռնամուխ են բանաձեւելու առաջադրանքը եւ այն հարցերը, որոնցով պիտի կատարվեն խորհրդատվության համար անհրաժեշտ ուսումնասիրությունները: Ծրագրի աշխատանքները համակարգվում է մեր անվանի ու բազմափորձ հայորդիներից՝ ամերիկաբնակ Տիար Ասո Դավիդյանի կողմից:*



*Մեր Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարումն անկարելի է պատկերացնել առանց եկեղեցական կառույցների սերտ ու ամուր գործակցության: Այս առումով մեծապես կարեւոր է Նվիրապետական Աթոռների, թեմերի եւ եկեղեցական մյուս կառույցների սերտ ու ջերմ հարաբերությունների խորացումը: Գոհունակությամբ ենք արձանագրում, որ բարվոք են Մայր Աթոռի հարաբերությունները Նվիրապետական Աթոռների հետ: Տեւական ժամանակ շարունակում են գործել միասնական հանձնախմբերը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ: Եղբայրական այս հարաբերություններով հնարավոր եղավ գումարել Եպիսկոպոսաց միասնական ժողովները, որոնց արդյունքում կատարեցինք նաեւ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը: Ուրախ ենք, որ տարեցտարի մեր Եկեղեցու թեմերից ավելանում են Սուրբ Երկիր ուխտագնացությունները հավատավոր Մեր զավակների, որով զորակցություն է բերվում Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը: Ընթացիկ տարում բարի ավարտ ունեցավ Տիրոջ Սուրբ գերեզմանի նորոգության օրհնյալ աշխատանքը, որին, ընդառաջ Երուսաղեմի Հայոց Պատրիարքի դիմումի, կարեւոր մասնակցություն բերեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն աշխարհասփյուռ իր թեմերով:*

*Վերջին ամիսների ընթացքում ամենքս մտահոգություն ունեցանք՝ կապված Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կյանքում տեղ գտած անցանկալի զարգացումների հետ: Փառք Տիրոջ, որ ընդառաջ Մեր հորդորի եւ հավատավոր մեր ժողովրդի սպասումների, Պատրիարքության հոգեւոր հայրերի եւ ազգայինների համատեղ ջանքերով, հնարավոր եղավ վերականգնել բնականոն վիճակը Պատրիարքության կյանքում, եւ Պատրիարքական ընտրյալ Տեղապահը կարողացավ ստանձնել իր պարտականությունները: Մենք վերստին Մեր զորակցությունն ենք բերում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական Տեղապահ Գերշ. Գարեգին արք. Բեկչյանին եւ հորդորում աննվազ նախանձախնդրությամբ իրականացնել Պատրիարքության ընթացիկ աշխատանքերը եւ մեր Եկեղեցու կարգաց ու կանոնաց համաձայն՝ կազմակերպել Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի ընտրությունը:*



*Սիրելի՛ հոգեւոր հայրեր, մեծահա՛րգ աշխարհական պատգամավորներ, քրիստոսավանդ սպասավորության հետ Մեր Եկեղեցու առաքելությունն է ազգային ինքնության պահպանումը: Այս ծիրից ներս մեր Եկեղեցու առանձնակի խնամքը պիտի շարունակվի նոր սերնդի կրթության գործում, որպեսզի սահակ-մեսրոպյան դպրոցը հավատքի, մայրենի լեզվի եւ հայրենյաց ավանդներով հար ապրի մեր ժողովրդի կյանքում: Եկեղեցական մեր կառույցների, եկեղեցականների ու աշխարհականների ողջ ներուժը հարկ է կենտրոնացնել՝ համախմբելու համար մեր ժողովրդի բոլոր զավակներին քրիստոնեական սիրո, եղբայրության եւ ազգային արժեքներով հարազատության մթնոլորտի մեջ, որ մեր Սուրբ Եկեղեցու օրհնության ներքո միշտ պայծառանա եւ հարատեւի մեր ժողովրդի կյանքը:*

*Շարունակությունը՝ էջ 4*

# Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովը
## Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

*Սկիզբը՝ էջ 3*

*Ինչպես սաղմոսերգուն է ասում՝ «Երանի այն ազգին, որի օգնականը Տեր Աստվածն է, երանի այն ժողովրդին, որին Իր համար Նա ժառանգություն ընտրեց» (Սաղմ. ԼԲ 12):*

*Եկեղեցու առաքելության արդյունավետության առանցքային գործոններից մեկը եկեղեցականի անձն է: Պատրաստված, հավատավոր ու նախանձախնդիր եկեղեցականները միայն կարող են, Պողոս առաքյալի խոսքով, որպես հայելի իրենց մեջ արտացոլել Քրիստոսի պատկերը, սեր, հավատ սերմանել հայ օջախներում եւ լավատեսություն՝ հայ կյանքից ներս: Եկեղեցականների պատրաստության առաքելությանն են ծառայում Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունները, որոնցում այսօր կրթվում են շուրջ 250 սան: Յուրաքանչյուր տարի ձեռնադրվում եւ ծառայության են կոչվում շուրջ 30 եկեղեցական: Հոգեւորականներ են պատրաստվում նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանքում, Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում եւ ընծայարանում, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի «Սուրբ Ներսես» ընծայարանում: Այսօր Մայր Աթոռում եւ թեմերում ծառայում են շուրջ 800 եկեղեցական: Հոգեւորականները ներկա են դպրոցներում եւ բուհերում, Զինված ուժերում, խնամատար հաստատություններում, հիվանդանոցներում: Հոգեւոր խնամք է տարվում քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց եւ նրանց ընտանիքների հանդեպ: Մայր Աթոռն իրականացնում է սոցիալական ծրագրեր՝ բարեգործական ճաշարանների, Գարեգին Երկրորդ տնաշինական ծրագրի, ծնողազուրկ երեխաների հովանավորության եւ այլ նախաձեռնությունների միջոցով: Մայր Աթոռի սոցիալական գրասենյակի կողմից աջակցություն է ցուցաբերվում ազգաբնակչության առավել կարիքավոր, խոցելի խմբերին, որոնց միայն անցած տարվա ընթացքում տրամադրվել է ընդհանուր 820 մլն. դրամի աջակցություն: Մայր Աթոռը մեծ ուշադրություն է դարձնում նաեւ Սիրիայից տեղահան եղած մեր զավակներին, ովքեր հաստատվել են Հայաստանում:*



*Մեր Եկեղեցու գործունեության ընդլայնումը եւ արդյունավորումը հնարավոր է դառնում մեր անկախ պետականության պայմաններում եւ պետական կառույցների ըստ ամենայնի զորակցությամբ, որի համար պատեհ ենք համարում, հանուն Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի մասնակիցներիդ, Մեր գոհունակությունն ու երախտագիտությունը հայտնել հայրենի իշխանություններին:*

*Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ պետականությամբ ամուր խարիսխ է ողջ հայության համար: Ամենքիս սրբազան պարտքն է պաշտպանել Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, բազմադարյա ու նվիրական մեր սրբությունները, ամեն ջանք ու եռանդ ծառայեցնել հայրենի մեր պետականության ամրացմանը եւ զորացմանը, մեր երկրի առջեւ ծառացած տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական եւ այլ բազում խնդիրների դիմագրավմանը: Մեր նվիրական պարտավորությունն է աջակցության ցուցաբերումը Հայոց բանակին, խաղաղության ապահովմանը մեր սահմաններում, ջանքերի մեկտեղումը հանուն Արցախի Հանրապետության զորացման ու միջազգային ճանաչման եւ մեր արդար դատի հաղթանակի:*



*2018 թվականին մեր ժողովուրդը նշելու է Սարդարապատի հերոսամարտի եւ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման 100-րդ տարեդարձը, որն առիթ պիտի դարձնենք արժեւորելու մեր անկախ պետականությունը, նորոգելու մեր սերն ու պատասխանատվությունը մեր հայրենիքի հանդեպ:*

*Սիրելի՛ ժողովականներ, վերստին մեր ուրախությունն ենք հայտնում Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման առիթով: Նոր ժամանակների բարենպաստ պայմաններում շնորհ եւ պատիվ է ամենքիս համար մեր Սուրբ Եկեղեցու կանոնադրության մշակման աշխատանքների իրականացումը, որը նոր հորիզոններ է բացելու մեր Եկեղեցու առաքելության օրինյալ ճանապարհին:*

*Գոհունակ սրտով գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում Մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին, թեմական եւ համայնքային վարչական անդամներին, բարերար ու բարեգործ մեր զավակներին, ձեզ բոլորիդ, սիրելի՛ ժողովականներ, որ ընդառաջ Մեր հորդորներին՝ մշտապես պատրաստակամությամբ աջակցություն ու օժանդակություն եք ցուցաբերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, մեր ժողովրդի կարիքներին Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:*

*Մեր աղոթքն է առ Բարձրյալ Տերը, որ բարի արդյունավորման առաջնորդենք այս ժողովը՝ ի նպաստ քրիստոսասեր մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կյանքի շինության: Հայցում ենք, որ Աստված զորակից լինի մեզ եւ Սուրբ Հոգով առաջնորդի մեր քայլերն ու ծառայությունները՝ հանուն մեր Սուրբ Եկեղեցու հավետ պայծառության եւ ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացի: Թող Տերն Իր Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի մեր Հայրենիքի եւ աշխարհասփյուռ ազգիս վրա այժմ եւ հավիտյանս. ամեն:*

Հայրապետական ուղերձից հետո ժողովականներին իր խոսքն ուղղեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական տեղապահ Գարեգին արք. Բեքչյանը: Նա իր ուրախությունը հայտնեց Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման առիթով, որի աշխատանքն ուղղված է եկեղեցական կյանքի կանոնակարգմանն ու պայծառությանը եւ Եկեղեցու առաքելության առավել արդյունավորմանը: Սրբազանն անդրադարձավ նաեւ եկեղեցական կյանքում վերջին տարիներին արձանագրված առաջընթացին եւ ձեռքբերումներին:

Ժողովի առաջին նիստին տեղի ունեցավ դիվանի, քննախույզ եւ օրինականության հանձնախմբերի ընտրությունը: Ժողովի ատենապետեր ընտրվեցին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը եւ տիար Լեւոն Սարգսյանը (Արարատյան հայրապետական թեմ), փոխատենապետերի պաշտոնն ստանձնեցին Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ արք. Մկրտչյանը եւ դոկտոր Վարուժան Ալթըբարմաքյանը (ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ):

Հունիսի 8-ի նիստին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերին ընդառաջ, մասնակցեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը:

Նորին Սրբությունը, ողջունելով ՀՀ նախագահի ներկայությունը ժողովին, անդրադարձավ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի առաքելությանը եւ գումարված 6-րդ ժողովի արդյունքներին՝ նշելով, որ ժողովը մեծապես նպաստում է Հայ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը եւ Եկեղեցու առաքելության արդյունավորմանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց նաեւ այն մշտական զորակցությունը, որ հայրենի իշխանությունների կողմից դրսեւորվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ:

*«Հայ Եկեղեցին մշտապես մեր պետության կողքին է, պատրաստ իր կարողություններով, աշխարհասփյուռ թեմերով ու կառույցներով աջակցություն բերելու Ձեզ եւ հայրենի իշխանություններին՝ մեր երկրի առջեւ ծառացած հիմնախնդիրների ու դժվարությունների հաղթահարման եւ մեր ժողովրդի նվիրական իղձերի իրականացման գործում»,*- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հաջողություններ մաղթելով ՀՀ նախագահին՝ պատասխանատու նրա բարձր առաքելության մեջ:




Այնուհետեւ ժողովականներին ողջունեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ կարեւորելով Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովի գումարումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Տիար Սերժ Սարգսյանն արդյունավետ աշխատանք մաղթեց ժողովի աշխատանքներին:



Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահը պատասխանեց ժողովի մասնակիցներին հուզող հարցերին, որոնք վերաբերում էին Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքներին, հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրադրությանը, հայրենիքի առջեւ ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրներին, Հայաստանում ապաստան գտած սիրիահայերին ցուցաբերվող աջակցությանը, եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայաստան-Սփյուռք կապերի առավել ամրապնդմանը:

Օրակարգի ընդունումից հետո կատարվեց քննախույզ, օրինականության, հաշվեքննիչ, ինչպես նաեւ թեկնածուներ առաջադրող, առաջարկներ ներկայացնող եւ կանոնադրական փոփոխությունների հանձնախմբերի անդամների ընտրությունը:

Առաջին օրը ժողովականների ուշադրությանը հանձնվեց Ազգային-եկեղեցական ժողովի 1945 թ. կանոնադրության փոփոխությունների լրամշակված նախագիծը, որի վերաբերյալ Հայ Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի անունից զեկույց ներկայացրեց ի. գ. դ. Գեւորգ Դանիելյանը:

Ներկայացված նախագծի՝ հոդված առ հոդված երկօրյա համակողմանի քննարկումներից եւ առաջարկված լրացումներից հետո ժողովի մասնակիցները քվեարկությամբ ընդունեցին ներկայացված փաստաթուղթը, որը վերջնական հաստատում կստանա առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովի կողմից: Վեհափառ Հայրապետն ու ժողովի անդամներն իրենց գնահատանքը հայտնեցին հանձնախմբին՝ կատարված աշխատանքի համար:

*Շարունակությունը՝ էջ 5*

# Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

*Սկիզբը՝ էջ 4*



Հունիսի 7-ի նիստին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների ընտրության առնչությամբ զեկուցեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը: Սրբազանը ներկայացրեց սահմանված ԳՀԽ-ի նոր թվակազմը. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքները ու խորհրդի 21 անդամ: Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների 1/3-ը նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իսկ 2/3-ը՝ ընտրվում Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կողմից: Ի պաշտոնե՝ ԳՀԽ-ի անդամ են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետը եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդը:

Զեկույցից հետո տեղի ունեցած քննարկման արդյունքում Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ ընտրվեցին տարբեր աշխարհամասերից հետեւյալ հոգեւորականներն ու աշխարհականները.

1. Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյան,
2. Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյան,
3. ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյան,
4. ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյան,
5. Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյան,
6. Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյան,
7. Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Վահան եպս Հովհաննիսյան,
8. ի. գ. դոկտոր Գեւորգ Դանիելյան (Հայաստան),
9. բ. գ. դոկտոր Վահան Տեր-Ղեւոնդյան (Հայաստան),
10. Թագվոր Բոյաջյան (Դամասկոսի հայոց թեմ),
11. ի. գ. դոկտոր Ժոզեֆ Կանիմյան (ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ),
12. դոկտոր Ալեքսանդր Ալավերդյան (Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ):

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ԵՆԺ-ի պատգամավորներն այս առիթով շնորհավորեցին ԳՀԽ-ի նորընտիր անդամներին՝ մաղթելով արդյունավոր աշխատանք վերոհիշյալ խորհրդի կազմում:

Ժողովին նաեւ անդրադարձ կատարվեց թեմերում թեմական ուղենշային կանոնադրության ներդրման գործընթացի արդյունքներին: Այս ուղղությամբ տարվող աշխատանքների եւ կանոնադրության ներդրման գործում արձանագրված դժվարությունների մասին զեկուցեց թեմական կանոնադրությունների լրամշակման եւ խմբագրման հանձնախմբի ատենապետ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը:

Զեկույցից հետո փաստաթղթի ներդրման գործընթացն ուշացնող թեմերի առաջնորդները եւ պատգամավորները բացատրություններ ներկայացրեցին ուշացման պատճառների վերաբերյալ:

Գնահատելով հանձնախմբի կողմից կատարված աշխատանքը՝ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի պատգամավորները կարեւոր նկատեցին հանձնախմբի հետագա գործունեությունը: Քննարկումներից հետո որոշվեց ընդլայնել հանձնախմբի կազմը եւ լիազորությունների շրջանակը՝ ուսումնասիրելու թեմերում ուղենշային փաստաթղթի ներդրման գործընթացի ուշացման պատճառները:

Հանձնախմբին հանձնարարվեց ուսումնասիրության արդյունքում փաստաթուղթը չորդեգրած թեմերի կողմից գործընթացում կամայականություն արձանագրելու պարագայում եզրակացությունը ներկայացնել Վեհափառ Հայրապետին՝ ԳՀԽ-ում հարցը քննարկելու եւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար:

Ժողովին Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման նախագահ Հովնան արք. Տերտերյանն ամփոփ զեկույց ներկայացրեց 2018 թ. երիտասարդության տարի հռչակման ծրագրի վերաբերյալ: Հանգամանորեն անդրադառնալով անցած տարիների ընթացքում ՀԵՀԵՄ-ի գործունեությանը՝ Հովնան սրբազանը տեղեկացրեց 2018 թ. ծրագրվող թեմական, միջթեմական եւ տարածաշրջանային համաժողովների ու համախմբումների մասին, որոնք կպսակվեն թեմերի կողմից կազմակերպվելիք երիտասարդական ուխտագնացություններով Սուրբ Էջմիածին եւ ուխտի ս. պատարագներով, ապա նաեւ «Դեպի Հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» կարգախոսի ներքո Մայր Աթոռում գումարվելիք երիտասարդական հավաքով:

Զեկույցից հետո ժողովականների կողմից ծրագրվող միջոցառումների առնչությամբ կատարվեցին առաջարկներ: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց ՀԵՀԵՄ-ի եւ թեմերի կողմից իրականացվելիք ծրագրերը՝ ընդգծելով, որ երիտասարդության հետ տարվող աշխատանքը պետք է առանցքային տեղ ունենա Հայոց Եկեղեցու առաքելության մեջ:

Վերջում Նորին Սրբությունը եւ ԵՆԺ-ի պատգամավորները գոհունակություն հայտնեցին ՀԵՀԵՄ-ի գործունեության եւ արձանագրած արդյունքների կապակցությամբ:

Հունիսի 8-ի նիստին Հայաստանի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ, Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Ռազմիկ Աբրահամյանը ժողովականներին զեկույց ներկայացրեց Հայաստանում ծնելիության իրավիճակի մասին: Վերջինս անդրադարձավ ՀՀ-ում ծնելիության անկման պատճառներին եւ ծնելիության թվի բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերին:

Ընդունելով ներկայացված զեկույցը՝ ժողովն արձանագրեց որդեծնության կարեւորությունն ամուսնական նվիրագործված միության եւ հայ ընտանիքի ամրության մեջ՝ հորդորելով, որ եկեղեցականներն իրենց հովվական ծառայության ընթացքում էական դեր հատկացնեն ծնելիության խրախուսմանը: Այս առնչությամբ որոշում կայացվեց նաեւ հայրենիքում ծնելիության աճին նպաստող առողջապահական եւ բժշկական կենտրոնների պայմանների բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին ամփոփ տեղեկություններ հաղորդվեցին Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունների, թեմերի եւ հայրապետական պատվիրակությունների ընթացիկ գործունեության մասին:

Ժողովն ամփոփվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը, գոհունակությամբ արձանագրելով ժողովի արդյունավետությունը, իր գնահատանքը հայտնեց աշխարհի բոլոր կողմերից Մայր Աթոռ ժամանած Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի հոգեւորական եւ աշխարհական պատվիրակներին՝ դրսեւորած նախանձախնդրության համար: Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ երկնավոր Տերը զորացնի Հայոց Եկեղեցու սպասավորներին եւ եկեղեցական կառույցներում պաշտոնավարող աշխարհականներին, ովքեր իրենց նվիրյալ ծառայությամբ նպաստում են Եկեղեցու պայծառությանը եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի բարօրությանը:

2017 թ. Եկեղեցական-ներկայացուցչական ժողովը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերգով:

# Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում





Հունիսի 9-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց ներկա ժողովականներին՝ շնորհավորելով խորհրդի նորընտիր անդամներին եւ մաղթելով նրանց արդյունավետ աշխատանք ԳՀԽ-ի կազմում: Նորին Սրբությունն ընդգծեց այն կարեւոր ծառայությունը, որ ԳՀԽ-ի անդամների կողմից մատուցվում է Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման եւ հոգեւոր առաքելության առավել արդյունավորման համար:

Ժողովի նիստերն ատենապետեց Հայաստանի աստվածաշնչային ընկերության նախագահ Եզնիկ արք. Պետրոսյանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն անդրադարձ կատարեց հունիսի 6-8-ը Մայր Աթոռում տեղի ունեցած Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի 6-րդ գումարման աշխատանքներին՝ գոհունակություն հայտնելով արձանագրված արդյունքների առնչությամբ: Մասնավոր գնահատանքով արձանագրվեց, որ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովում դրական ընդունելության արժանացավ Ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրության փոփոխությունների նախագիծը, որը պիտի նպաստի Եկեղեցու կանոնական կյանքի ամրապնդմանը:

Գերագույն հոգեւոր խորհրդի օրակարգում քննարկման նյութ դարձավ Ազգային-եկեղեցական ժողովի գումարման եւ օրակարգի ձեւավորման հարցը: Արձանագրելով Ազգային-եկեղեցական ժողովի կարեւոր դերակատարությունը եկեղեցական եւ ազգային կյանքում առկա մարտահրավերների հաղթահարման գործում՝ որոշվեց ստեղծել ժողովի նախապատրաստման հանձնախումբ:

Նիստի ընթացքում արծարծվեց նաեւ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի ժամանակ ներկայացված՝ Հայաստանում ծնելիության իրավիճակի վերաբերյալ զեկույցը: Հիմք ընդունելով նյութի շուրջ ծավալված քննարկումները եւ արտահայտված մտահոգությունները՝ խորհուրդը ձեւավորեց հանձնախումբ՝ խնդրի առնչությամբ հովվական-քարոզչական անհրաժեշտ ծրագրեր կազմելու եւ Հայաստանում ծնելիության աճի խթանմանն ուղղված այլ միջոցառումներ ձեռնարկելու համար:

Առանձին հանձնախումբ ձեւավորվեց նաեւ Սարդարապատի ճակատամարտի եւ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման 100-րդ տարեդարձի առիթով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից իրականացվելիք միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

ԳՀԽ-ի նիստն ավարտվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ գնահատանքի խոսքով:

***Լրատվական նյութերը՝***
***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ***

# Նարեկյան խոսքի մետաֆորիկան՝ մարդու ներաշխարհի հասկացման եւ հոգեւոր աճի ճանապարհին



*«Ի սկզբանէ էր Բանն. եւ Բանն էր առ Աստուած. եւ Աստուած էր Բանն»* (Հովհաննես Ա 1):

Յուրաքանչյուր մարդու կյանքի կարեւորագույն խնդիրը ինքնահաղթահարումն է: Մարդկային ողջ կյանքը, ըստ էության, ինքնահաղթահարումների, հասկացման, ինքնահասկացման անընդհատ շղթա է: Մարդն է միայն այն զարմանալի էակը, որ իր կոչման մեջ հաստատ մնալու եւ իմաստնանալու համար կարիք ունի աստվածանմանության: Այդ բարդ ճանապարհին նրան անհրաժեշտ է ճշմարիտ, իմաստուն մի Խոսք՝ ծնված սրտի խորքից, առանց որի գրեթե անհնար է անցնել այդ ուղին:

*«Ձեզ հետ, խօսքեր առէ՛ք», կ՛ըսէ Ովսէէ, «ու Ձեր Տէր Աստուծոյն դարձէ՛ք, ու ըսէ՛ք անոր, կրնա՛ս մեր մեղքերը ներել. որպէս զի բարիք ընդունիք, ու ձեր անձերը բարօրութիւն վայելեն»* («Աշխարհաբար Նարեկ», Միսաք Ա. Մ. Գօչունեան (Քասիմ), 1902 թ. Կ. Պոլիս, ԻԸ Խօսք):

*«Եւ ինչպէս երբեմն Մովսէսին, նոյնպէս ալ անոր վրայ արծիւի նման թեւերդ տարածելով՝ հանդարտ կերպով հանգստանալու համար բարեբեր երկիր առաջնորդեցիր զայն եւ վարդապետներուն հրաման ըրիր, որ խօսքի կերակուրը տան անոր»* (նույն տեղում, ԺԴ Խօսք):

Կատարյալ այդ Խոսքը աղոթքն է, որը որպես փարոս՝ ուղղորդում է մարդու հոգին դեպի լույսը: Աստվածային Լույսը «Նարեկի» աղոթքներով տրվեց մարդկությանը՝ այդ աստվածային Բանը ընկալելի դարձնելով բոլորին:

Փոխաբերություններով, համեմատություններով եւ էպիտետներով հարուստ է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի գեղարվեստական լեզուն՝ լի մարդկային հույզերի, ապրումների գունակազմության գեղեցիկ եւ ճշգրիտ նկարագրություններով: Իհարկե «Մատյան»-ի գեղարվեստական արժեքն անքննելի է, սակայն աղոթագրքում այլաբանությունների եւ փոխաբերությունների առկայությունն արժեւորվում է նաեւ «Նարեկի» հասկացման տեսանկյունից. Նարեկացու արտահայտչական միջոցները հնարավորություն են տալիս ավելի հասկանալի դարձնել աստվածաշնչյան այն կարեւորագույն ճշմարտությունները, որոնք զետեղված են «Մատյան»-ում:

Բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են նարեկյան խոսքի այլաբանությունների, համեմատությունների, փոխաբերությունների գեղեցկությանը, սակայն մասնավորապես փոխաբերությունների դերը, իմաստը եւ նշանակությունը դեռեւս լիովին չեն բացահայտված «Մատյան ողբերգության» աղոթագրքում:

Մետաֆորան (փոխաբերությունը) շատերի համար բանաստեղծական երեւակայության արտահայտման գործիք է՝ լի հռետորական ավելորդություններով: Այն հիմնականում դիտարկվում է որպես լեզվաբանական հնարք՝ կապված զուտ բառերի, լեզվի, բառակերտության հետ (Дж. Лакофф, М. Джонсон, Метафоры, которыми мы живем: Под ред. А. Н. Баранова. Изд. 2-е.-М.: Издательство ЛКИ, 2008, 25 с.): Մետաֆորիկ ձեւակերպումների կիրառման կարեւորվորությունը, մտածողության եւ գործողության տեսանկյունից, շատերի համար անհասկանալի է: Սա է պատճառը, որ մարդկանց մեծ զանգվածի կարծիքով՝ փոխաբերությունների օգտագործումն առօրյա խոսքում այդքան էլ պարտադիր չէ: Ամերիկացի լեզվաբան, կոգնիտիվ լեզվաբանության պրոֆեսոր Ջորջ Լակոֆֆի «Մետաֆորներ, որոնցով մենք ապրում ենք» («Metaphors we live by», George Lakoff) գրքում ուսումնասիրվում է փոխաբերությունների անհրաժեշտությունը մեր իրականության մեջ, որտեղ նշվում է, որ փոխաբերությունը թափանցում է մեր առօրյա կյանք, ընդ որում՝ ոչ միայն լեզու, այլ նաեւ մտածողության սիստեմ ձեւավորելով արտաքին աշխարհի մեր ընկալումում: Ըստ հեղինակի՝ փոխաբերությունը մեր փորձը հասկանալու գլխավոր եւ հիմնական մեխանիզմներից մեկն է, որը կարող է նոր իմաստների ծնունդ տալ, ստեղծել նմանություններ եւ դրանով իսկ սահմանել նոր իրականություն: Անբացատրելի է թվում այն հանգամանքը, թե ինչու մարդկային մտածողության համակարգի համար էական նշանակություն ունեցող այս ֆենոմենի օգտագործումը որեւէ երեւույթի ճշմարտության բացահայտման ժամանակ չի կարեւորվում:

Փոխաբերության իմաստը հետեւյալն է. որեւէ իրողության հասկացումն ու վերապրումը հնարավոր են դառնում մեկ այլ իրողության էությանը բնորոշ հատկանիշների օգնությամբ: Այսինքն՝ որեւէ երեւույթ ավելի խոր հասկանալու համար այն համեմատվում է նմանատիպ հատկություններով օժտված մեկ այլ երեւույթի հետ: Այսպիսով՝ փոխաբերության հիմքում ընկած է համեմատությունը՝ հիմնված հատկանիշների նմանության կամ ընդհանրության վրա:

Փոխաբերությունները, այլաբանությունը կամ չափազանցումը զուտ խոսքը հարստացնելու եւ նրան պոետիկ ձեւակերպում տալու համար չեն: Ամեն խոսք միտված է հասցեատիրոջը ուղղել գաղափար եւ տանել նրան հասկացման: Իսկ ինչպե՞ս ավելի մատչելի եւ պատկերավոր դարձնել այն հաղորդագրությունը, որն ուղղվում է խոսքի միջոցով: Փոխաբերությունն այն կարեւոր ոճային հնարքներից է, որը բացատրում, հասկացնում, ավելի դյուրին է դարձնում ինֆորմացիայի ընկալումը: Հասկացմանը հաջորդող փուլը գործողությունն է: Փոխաբերական ձեւակերպումները կարող են բերել ոչ միայն իրականության ճիշտ ընկալման, այլ նաեւ՝ դրա արդյունքում այդ իրականության փոփոխման, տրանսֆորմացիայի:

Երբ խոսքը մարդու ներաշխարհի մասին է, շատ անգամ նրանում տեղի ունեցող երույթները, զգացումները շատ դժվար է պարզ եւ լիարժեք ձեւակերպել: Յուրաքանչյուր մարդ առանձին մի աշխարհ է՝ իր գույներով ու երանգներով, իր հոգուն հատուկ մեղեդիով ու ելեւէջներով: Սա է պատճառը, որ հաճախ մարդը ինքն է դժվարանում հասկանալ եւ առավել եւս նկարագրել այն, ինչ տեղի է ունենում իր հոգեկան աշխարհում: Իհարկե շատ դեպքերում զգացողությունները մենք նկարագրում ենք բոլորիս հասկանալի ու պարզ բառերով՝ տխրություն, երջանկություն, թախիծ, կարոտ եւ այլն:

Բայց այս բառերից յուրաքանչյուրի տակ ապրում են տասնյակ ու տասնյակ դժվար նկարագրելի զգացումներ, զգացողություններ՝ իրենց բազմերանգությամբ եւ բազմաբովանդակությամբ: Փոխաբերությունների շնորհիվ ավելի պատկերավոր են դառնում մարդկային հոգեվիճակները, որոնք նկարագրում է Նարեկացին, ինչն էլ հնարավորություն է տալիս ընթերցողին ավելի հստակ տեսնել բոլոր այն հույզերը, որոնք, հնարավոր է, ապրում են նաեւ իր սրտում, հոգում եւ մտքում:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ

*Սկիզբը՝ թիվ 4, 6, 9-10*

Բռնկվել է աշխարհածին, հողածին կրակը, մարմնի կրակը: Հաղթանակում է մարմինը: Կոստանդինը սիրում եւ գովերգում է մարմինն ու աշխարհը, աշխարհայինը, բնությունը, որովհետեւ այդ բոլորից է ծնվում ամեն գեղեցիկ ու աննման իրք: Բանաստեղծը հոգեւոր ցնծության մեջ է. նա դառնում է ականատեսն ու մասնակիցը տիեզերքի հարսանիքի՝ ձմեռ ու խավարի, սառ ու պաղի, մութ ու մլարի մահը բերող գարնան զարթոնքի, որը մեծ գոհությամբ երկնքից երկիր ավետվում է մարդկանց.

*…Երկիրս է մայր աննմանի,*
*Զինչ գեղեցիկ իրք ծընանի,*
*Շատ բարութիւնք յինք սընանի*
*Հանց որ փըռին գեղեցկացել:*
*Հեզ որոտայ ամբ ցողաբեր,*
*Կամար կապի յերկինս ի վեր,*
*Հոսէ յերկիր ահեղ գետեր.*
*Հաւսար զերկիր են արբուցել:*
*Է հարսանիք տիեզերաց,*
*Է ցընծութիւն պըտղաբերաց,*
*Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց*
*Ծաղկունք զերկիր են զարդարել:*
*…Հավերըդ գան քաղցըր ձայնով,*
*Ծիծեռն ի հետ սաղմոսելով,*
*Գայ արտուտիկըն՝ կարդալով.*
*Զառաւօտուն է բարբառել:*
Եվ՝
*…Ղումրին երգէ մեզ եղանակ,*
*Թ՛ այսօր եղեւ պայծառ գարուն:*

Հանճարեղ Կոստանդինը բնությունն ընդունում է որպես երկրային կատարյալ ու աստվածային գեղեցկությունների մայր:

Տեղին է մեջբերել գրականագետի խոսքը. «Համաշխարհային գրական մտքի պատմության մեջ իր ժամանակի տեսանկյունից մի հազվագյուտ բան էին այս հարցադրումը եւ լուծումը, այն, որ ամեն տեսակի գեղեցկության ակունքը երկիրն է, բոլոր իրերի ու երեւույթների հիմքը երկրայինն է, բնականն ու մարդկայինը: Այսպիսով նա վերջնականապես շրջում է հնագույն բանաձեւը՝ աստվածայինը որոնելով երկրի վրա» *(Հր. Թամրազյան, Հայ քննադատություն, Բ գիրք, էջ 501)*:

Հոգեւոր ցնծության, բոց ու կրակի մեջ է բանաստեղծի սիրտը, եւ հանկարծ բնության զարթոնքի, տիեզերական հարսանիքի միջով անցնում է աշխարհիկ գեղեցկությունների պսակը՝ կինը, գեղեցիկ ու բարակիրան Մորճը: Ամբողջանում է բնությունը, եւ կատարյալ դառնում տաղերգուի սքանչացումն ու հիացումը.

*Հանց գեղեցիկ մորճ ու շիտակ,*
*Պատկեր գեղով առ յիս հասաւ,*
*Այլ չէ՛ տեսեր մարդ կենդանի*
*Զայն, որ իմ աչքս տեսաւ:*

Խավարի միջից լույս է ծագում եւ իր ամենացոլց շողերը թափում աշխարհի վրա: Երեւում է կինը՝ իր կանացի հմայքներով, նազուն խաղերով, սիահ մազերով, ակն գոհարե ատամներով, երեսի շուրջ թափված ոլոր մազերով… Այդ ամենը բանաստեղծին անում են «շատ մոլոր» եւ.

*Զօրն ես ի իւր սէրն կենամ,*
*Յերազ հետ իւր տեսուն գնամ,*
*Զաչերս արեամբ հետ իւր թանամ՝*
*Զերայ հոգիս յիսնէ տարաւ:*
*Երբ որ անուշ հոտն յիս բուրեց,*
*Զիս ի խելաց շուտով թափեց.*
*Ի յայն պահուն սիրտս իմ եփեց՝*
*Երբ իւր տեսն ինձ երեւեցաւ:*

Սիրելի կնոջ ներկայությունն ու տեսքն արբեցնում են սիրահարին, եւ ինչպես Գրիգոր Նարեկացին էր ձգտում անվերջ սիրով անբաժանելի միանալ իր Աստծուն, այնպես էլ մեր տաղերգուն է փափագում անվախճան սիրով, անբաժան կերպով լինել իր սիրածի հետ, որը նրա համար մի սրբություն, մի աստվածային տուն, մի տաճար է.

*Թէ սիրտ ունիմ՝ սէր անվճար,*
*Որ բաժնելոյ այլ չկա ճար,*
*Նա իմ հոգոյս եղեր տաճար,*
*Իմ աչերուս լոյս ծագեցաւ:*

Մենք արդեն տեսանք, որ Երզնկացին աշխարհը, բնությունը համարում է ամեն գեղեցիկ բաների ծնող, մայր եւ իր սիրուհուն էլ գովերգում ու փառաբանում է՝ համեմատելով աշխարհի, բնության եզակի ու գեղեցիկ պատկերների հետ.

*Զերդ զլուսին սուրաթ բոլոր…*
*…Տեսն իւր կարմիր է զարդարած՝*
*Զինչ բուրաստանք, որ ծաղկեցաւ…*

Անհուն ու հզոր է բանաստեղծի հոգետոչոր բաղձանքը՝ անբաժան միանալ նրան, ում սիրում է ինքը: Ինչպես ծարաված երկիրն է կարոտ ցողունին, գարնան անուշ քամուն, այնպես էլ Կոստանդինն է կարոտ մնացել Մորճի սիրուց, որից կախված եւ որի մեջ է իր երջանկությունը: Կյանքը, անցողիկ լինելով, վաղանցիկ են նաեւ սերն ու երջանկությունը, պետք է շտապել վայելել այն: «Այսօր եղայ հողմըն գարնան» քերթվածի մեջ հեղինակը կարծես վախենում է սիրո վայելքի վաղանցիկությունից եւ խրատ է կարդում աննման բաներ բարբառող բլբուլին, քանի հարմար է առիթը, քանի դեռ չի անցել ժամանակը.

*Այսօր խօսէ՝ զինչ քեզ պիտի,*
*Չի է խընդման օր եւ շատի,*
*Թէ չէ՝ երբ վարդըն երթա զատի,*
*Քո սիրտ այլ ո՞ւր երթա հաւան:*

Բանաստեղծն իր բաղձանքին կհասնի ա՛յն ժամանակ եւ կվայելի սերը, երբ ինքն իր սիրուհու հետ քեֆի-ուրախության կնստի.

*Այսօր մեզ տուր անուշ գինի,*
*Չի ես ուրախ սիրով սաղի.*
*Մեզ խընդութեան օր եւ խաղի*
*Այսօր էհաս ու օր խընդման:*
*…Յայնժամ լինի այն մեզ նշան,*
*Որժամ խմեմ զլի շիշան.*
*Նռան գունով զգինին ռաւշան,*
*Որ քո տեսուդ նմանեցաւ:*

Սակայն երկար չի տեւում տաղերգուի ուրախությունը. Մորճը հեռանում, զատվում է նրանից, չի արձագանքում նրա զգացմունքներին՝ պատճառ դառնալով կարոտի ու վշտի սրտաշարժ տողեր գրելու.

*Քանի որ յիմ տեսուս զատեր՝*
*Կենաց ճարակն է ինձ հատեր,*
*Լացն ու հառաչն է զիս պատեր,*
*Հոգու քաղիլ ու սրտացաւ:*

Սիրեգուի հուզառատ հոգեաշխարհում ծավալված ու ծովացած սրբազան սիրո անկեղծ ու մաքուր ապրումները մի ազնիվ ներշնչումով նոտարագրված տաղեր են, որոնք հոգեհարազատ են եղել շատերին, սրանք էլ խնդրել են, պահանջել են բանաստեղծից աշխարհի ու սիրու բաներ.

*Եղբարք մի կան հետ մեզ սիրով,*
*Աշխարհի բան ուզեն գըրով.*
*Նա եւ վասն այն յայտնի ձայնով*
*Սիրու բաներ ասցի յոլով:*

Իսկ Մորճը ծածկում է երեսը, խույս է տալիս հանդիպելուց, փախչում է հեռու: Բանաստեղծի համար աշխարհը մթնում է, կյանքը դառնում է անիմաստ, սուտ, անշահ ու անօգուտ: Եվ սրտի դառն ու ցավագին կսկիծով Երզնկացին գրում է.




*Դարձիր յունայն սուտ բաներուտ,*
*Չի է անշահ եւ անօգուտ,*
*Խելօք Իմաստութիւնդ մուտ,*
*Չի քեզ բաժին իրք մ՛այլ անկաւ:*

Սիրո ողբերգական ապրումների ու տեւական տառապանքի մի սրտաճմլիկ, ցավոտ ու դրամատիկ տաղ է «Հոգի՛, աչերուս իմ լոյս» սկսվածքով քերթվածը, որն իր հուզականությամբ, բանաստեղծական մեծ արվեստով, խոսքի բարձր վարպետությամբ ու հոգեզմայլ երաժշտականությամբ փայլում ու փայլելու է ժամանակի մեջ՝ ժամանակին ու ընթերցողին ձգելով հանճարեղ տաղերգուի բանաստեղծական աշխարհը…

Այստեղ մեկիկ-մեկիկ գրառված են սիրուց խենթացած սիրահարի հոգեկան ապրումները՝ ցնծությունը, խաբված լինելու վախը, անհուն կարոտը, հավատը, անսահման տառապանքը ու դրանից ծնված հոգեմաշ դրաման…

Բանաստեղծը գեղանազ Մորճի գերին է, ինքնակամ ծառան, նրան փառաբանելով՝ ինքը դարձել է սիրած էակի «աշըղը», նաեւ «պլպուլը»: Աննման կինը սիրերգուի հոգին է, աչքերի լույսն է, հոգու հոգին, նաեւ «ամէն ծաղկանց» զարդը եւ «սուլթանը», արեգական լույսը, սիրո հիվանդի «հէքիմն ու ճարակը»…

*Շարունակությունը՝ էջ 8*

# Էվթանազիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները



*Սկիզբը՝ թիվ 10*

Բժշկության պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ բժիշկներն օգնել են անբուժելի հիվանդների կյանքից կամավոր հեռանալուն: Այսօրինակ եղանակով կյանքից հեռացել են Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինը, հայտնի հոգեվերլուծաբան Զիգմունդ Ֆրեյդը, մարքսիստ փիլիսոփա Պոլ Լաֆարգը՝ իր կնոջ՝ ժեննի Մարքսի հետ, միլիարդատեր Ա. Օնասիսը եւ ուրիշներ:

Էվթանազիայի հիմնահարցը վերստին սկսեց լայնորեն քննարկվել 20-րդ դարի 50-ական թթ.: Դրան նպաստել է նաեւ ամերիկացի պաթոլոգանատոմ Գեւորգ Գեւորգյանի գործունեությունը Միացյալ Նահանգներում՝ ուղղված էվթանազիայի օրինականացմանը: Նրան անվանեցին «դոկտոր մահ»:

1958 թ. բժիշկ Գեւորգյանը հրապարակեց մի շարք հոդվածներ, որոնցում կոչ էր անում մահապատժի դատապարտված հանցագործներին կյանքից զրկել ոչ ցավագին ձեւով: Ավելին՝ նա կոչ էր անում հանցագործների մահվան, երկարատեւ կամ ցմահ բանտարկության ենթարկվածների մարմնի առանձին օրգաններն օգտագործել փոխպատվաստման եւ այլ փորձարարական նպատակներով:

Ավելի ուշ նա հորդորում էր «օգնության» ձեռք մեկնել անբուժելի հիվանդներին»: Թերթային հրապարակումներից եւ բանավոր կոչերից Գեւորգյանն անցավ գործի. արտոնագրեց իր հայտնագործությունը, որը հետագայում լրագրողներն անվանեցին «մահվան մեքենա»:

Այն կոչված էր օգնել մարդուն մեռնելու առանց ցավերի՝ ինքնուրույն սեղմելով համապատասխան կոճակը: Հետագայում Գեւորգյանը, նկատի ունենալով հոգեբանական այն իրողությունը, որ մարդը կարող է վերջին պահին փոխել իր որոշումը, հատուկ լրացուցիչ սարք էր հարմարեցրել այդ «մեքենային», որի միջոցով մահվան գնացող անձը կարող էր մեկ այլ կոճակ սեղմելով՝ կանգնեցնել «մեքենան»:

ԱՄՆ-ում մեծ աղմուկ առաջացրեց Գեւորգյանի գործունեությունը ոչ միայն վերը նշյալ պատճառով, այլ նաեւ այն բանի համար, որ առանց բժիշկ-գործընկերների հետ խորհրդակցության՝ վճռում էր հիվանդության ճակատագրական ելքը: Քառորդ դարի ընթացքում «Միստր մահին» հաջողվեց ավելի քան 150 անբուժելի հիվանդի կյանքից զրկել: Միչիգանի նահանգում դատական մարմինների հետ բազմամյա «պատերազմը» ավարտվեց Գեւորգյանի ազատազրկմամբ:

Ավելի վաղ Ամերիկյան բժիշկների մասնագիտական ընկերակցությունը նրան զրկեց բժշկի կոչումից: 2007 թ. հունիսի 1-ին՝ շուրջ 8 տարվա ազատազրկումից հետո, ելնելով առողջական վիճակից եւ հաշվի առնելով նրա խոստումը՝ 2 տարի ընդհանրապես չխոսել էվթանազիայի օգտին, դոկտոր Գեւորգյանին ազատ արձակեցին:

Առաջին անգամ էվթանազիան օրինականացվեց Նիդեռլանդներում: Դեռեւս 1984 թ. երկրի Գերագույն դատարանը ճանաչեց կամավոր էվթանազիայի իրավունքը. եթե բժիշկը հետեւում է Թագավորական բժշկական ընկերակցության հրահանգներին՝ նա կարող է չվախենալ քրեական պատասխանատվությունից:

1998 թ. Էրազմ Ռոտերդամացու անվ. համալսարանում անցկացված փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ կամավոր էվթանազիան պաշտպանել է Հոլանդիայի բնակչության մեծ մասը: Եվ չնայած կրոնական բնույթի հակափաստարկներին, այնուամենայնիվ, մեծամասնությունը հանդես եկավ իրավունքի պաշտպանությամբ:

Հենց այդ պատճառով, չնայած ընդդիմության առկայությանը, ակտիվ էվթանազիայի որոշ ձեւերի օրինականացման մասին օրենքն ընդունվեց խորհրդարանի ստորին պալատի կողմից: Ներկայումս դատարանի որոշմամբ, ամեն կոնկրետ դեպքում, սակայն խիստ որոշակի հանգամանքներում, եթե բժիշկը մեռցնում է հիվանդին կամ նպաստում է նրա ինքնասպանությանը, կարող է եւ չճանաչվել մեղավոր: Դրա համար սահմանված է երեք հիմնական պայման (գոյություն ունեն բազում այլ պայմաններ):

Էվթանազիան պետք է լինի՝

- ❖ միայն ու միայն կամավոր,
- ❖ արտահայտված միայն գրավոր,
- ❖ միայն բժիշկը կարող է օգնել կամ իրականացնել էվթանազիան,
- ❖ բժշկական տեսանկյունից հիվանդի վիճակը պետք է խիստ ծանր լինի:

Եվ այդ հարցում պետք է համընկնեն տարբեր չեզոք բժիշկների կարծիքները:

Չնայած աշխարհի տարբեր երկրներում չկան էվթանազիան միանշանակորեն ընդունող օրենքներ, այդուհանդերձ, անհուսալի հիվանդներին մեռցնելու պրակտիկան արդյունավետորեն կիրառվում է բժիշկների կողմից:

Հոլանդիայից հետո երկրորդ երկիրը, որն էվթանազիան վերապահումներով օրինականացրել է, Բելգիան է:

Շվեյցարիայում, որտեղ էվթանազիան սկզբունքորեն արգելված է, ցանկացած մարդ, ով օգնում է մյուսին կյանքից հեռանալու, կարող է եւ չդատապարտվել, եթե իհարկե չի հետապնդում անձնական շահ... Ըստ փորձագետների գնահատումների՝ ամեն տարի Շվեյցարիայում այդ կերպ կյանքին հրաժեշտ է տալիս շուրջ 100 մարդ:

1997 թ. Կոլումբիայի Սահմանադրական դատարանը կայացրեց որոշում, որի համաձայն՝ անհուսալի հիվանդի կամավոր մահվան ցանկությունն իրականացնող բժիշկը դրա համար կարող է եւ դատարանում պատասխանատվություն չկրել:

ԱՄՆ-ի Օրեգոն նահանգում օրինականացված է «ինքնասպանությունը՝ ուրիշ անձի օգնությամբ»: Խոսքն այն մասին է, երբ բժիշկը հիվանդին նշանակում է մահացու դեղաչափեր:

Կալիֆոռնիայում երկար քննարկումներից հետո, համաձայն հանրաքվեի արդյունքի, 1977 թ. ընդունվեց «Մարդու մահվան իրավունքի մասին» օրենքը: Ըստ դրա՝ անբուժելի հիվանդ անձինք կարող են պատրաստել փաստաթուղթ, գրել կտակ, որտեղ իրենց ցանկությունը կարող են արտահայտել վերականգնողական սարքավորումն անջատելու վերաբերյալ:

Հակառակ օրենքի նորմերի՝ որոշ երկրներում այդուհանդերձ իրականացվում է էվթանազիան, սակայն մարդու իրավունքների պաշտպանության դրոշի ներքո: Հարց է ծագում. եթե գոյություն ունի կյանքի իրավունք, ապա արդյո՞ք կարելի է պնդել, որ գոյություն ունի նաեւ «մահվան իրավունք»: Եթե դա ընդունենք, ապա այն կհակասի օրենսդրության սկզբունքներին: Չէ՞ որ ամենակարեւորը կյանքի պաշտպանությունն է: Չէ՞ որ օրենքը կյա՛նքը, ապրելո՛ւ իրավունքը պետք է պաշտպանի, ոչ թե մահը կամ մահվան իրավունքը:

*Շարունակելի*

***Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ***

***Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

## ԼԵՎՈՆ-ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ «ՁԵԶ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ՏԻԿՆԱ՛ՅՔ ԵՎ ՊԱՐՈՆԱ՛ՅՔ» ՎԵՊՈՒՄ

Հայոց եղեռնի թեման լուսաբանած գրողների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Լեւոն-Զավեն Սյուրմելյանի անունը: Խոսքը մասնավորապես վերաբերում է նրա «Ձեզ եմ դիմում, Տիկնա՛յք եւ Պարոնա՛յք» հանրահայտ վեպին, որում գեղարվեստական մեծ վարպետությամբ պատկերված են 1915 թ. տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, վերջիններիս պատմական, բարոյահոգեբանական, ազգային եւ կրոնական ասպեկտները: Ուշագրավ է, որ ինքը՝ Սյուրմելյանը, կոտորածների ականատեսն է եղել եւ սեփական մաշկի վրա է զգացել դրանից առաջացած վիշտն ու մորմոքը: Բայց եւ այնպես նրան չեն համակում չարն ու ատելությունը, ինչը կարող է առնվազն տարօրինակ թվալ: Ինչեւէ, այստեղ ոչ մի արտառոց բան չկա, քանզի գրողն իր էությամբ արվեստագետ է, իսկ ճշմարիտ արվեստագետները, որպես կանոն, մեծ հումանիստներ են լինում եւ անկախ ամենից՝ պահպանում են ճշմարիտ քրիստոնյայի բարոյական դիմագիծը: Լեւոն-Զավեն Սյուրմելյանին եւ նրա գիրքը փայլուն կերպով բնութագրել է նրա գրչընկեր Վիլյամ Սարոյանը. *«Սա մի վեհ, ազնվացնող գիրք է, որը տոգորված է անաղարտությամբ եւ հումորով, բարությամբ ու ուժով: Սրանք այնպիսի որակներ են, որոնք բնորոշ են իրապես կենսախինդ եւ կիրթ մարդկանց: Լեւոն-Զավեն Սյուրմելյանը պատերազմական տարիներին ապրած այն հայազգի երեխաների թվին է պատկանում, ովքեր կարողացան խորամանկել ոսոխին եւ չնահատակվել: Այդ երեխաների մասին այժմ գիտեն բոլորը: Նրանց մասին էր գրել Ֆրանց Վերֆելը «Մուսա Լեռան 40 օրը» գրքում, իսկ այդ շարադրանքը շարունակեց Էլջին Գրոսքլոուսն իր «Արարատ» վեպում: Այդուհանդերձ հենց այս գրքում է առաջին անգամ պատկերված մանուկների պատմությունը, եւ վերջինիս ներկայացնողը եւս մի հայազգի մանուկ է: Այդ երեխաների աշխարհը փլուզվել էր, բայց բնավ ոչ կյանքը: Նրանցից շատերն ապրում են Արեւելյան Հայաստանում, Ռուսաստանում, Իրանում, Սիրիայում, Հունաստանում, Կանադայում, Մեքսիկայում, Հարավային Ամերիկայում եւ ԱՄՆ-ում: Հայ մանուկներից շատերը մեռան հայրենիքում իրենց աշխարհի հետ միասին: Այդ նահատակված մանուկների ընկերները, ովքեր ավելի բախտավոր էին ու տոկուն, ողջ մնացին: Վերջիններս մշտապես վառ կպահեն նահատակների հիշատակը: Հայ մանուկների թշնամին ոչ թե կոնկրետ ազգ էր կամ ժողովուրդ, այլ վերացական չարը: Երեխաները ոչ մի մեղք չունեին: Եթե նրանք պատկանում էին որեւէ ազգության, ապա դա երեխաների ազգությունն էր: Նրանք ոչ մեկին վնաս չէին պատճառել: Ինչեւէ, մարդկային չարը ջանում էր ոչնչացնել այդ մանուկներին, սակայն վերջիններս հրաշքով ողջ մնացին. կարծես նրանք հեքիաթում ապրած լինեին ու ոչ թե իրականության մեջ:*

*Լեւոն-Զավեն Սյուրմելյանը հայրենիքից գաղթեց Ամերիկա եւ ծեռնամուխ եղավ իր կյանքի փշրված առասպելը վերականգնելու գործին: Ահա այս ամենի մասին է շարադրված Սյուրմելյանի գրքում:*

*Վեպի շարադրանքի մեջ դուք չեք զգա ատելության նշույլ անգամ, քանզի ատելությունն ու մահը ընկերներ են, իսկ Սյուրմելյանի երկը կյանքի պատմություն է եւ ոչ թե մահվան:*

*«Ձեզ եմ դիմում, Տիկնա՛յք եւ Պարոնա՛յք» երկը պատկանում է այն փոքրաթիվ հրաշալի ստեղծագործությունների շարքին, որ ես երբեւէ ընթերցել եմ: Ողջ գիրքը կարծես քնարական պոեմ լինի: Սյուրմելյանական ոճը պարզ է ու անկեղծ, այն լի է ջերմությամբ եւ հումորով, բայց միեւնույն ժամանակ այն տոգորված է թախիծով, որը բնորոշ է խելացի եւ կրթված մարդուն:*

*Չեմ պատկերացնում, որ գրողի գրվածքը հիասթափեցնի որեւէ մեկին: Ես չեմ ասում այս խոսքերն այն պատճառով, որ Լեւոն-Զավեն Սյուրմելյանն իմ ընկերն է: Վարպետորեն*



*գրված եւ խորաթափանց գիրքը ես միանգամից եմ ճանաչում»*: Ահա այսպես է Վիլյամ Սարոյանը բնութագրել Սյուրմելյանին ու նրա գիրքը: Ընթերցելով «Ձեզ եմ դիմում, Տիկնա՛յք եւ Պարոնա՛յք» վեպը՝ ակամայից համոզվում ես, որ Վիլյամ Սարոյանը միանգամայն իրավացի է իր տված գնահատականներում, իսկ նրա բնորոշումները շատ տեղին են ու դիպուկ: Սյուրմելյանի երկը ուշագրավ է նախ եւ առաջ նրանով, որ դրանում հայոց եղեռնը ներկայացված է մանկան հայացքով: Սյուրմելյանն իրոք շատ անկեղծ է ու անմիջական, ինչն առավել հետաքրքիր եւ գրավիչ է դարձնում նրա գրվածքը: Վերջինիս մեջ չի նկատվում այն ատելությունն ու չարացածությունը, որոնք առկա են, օրինակի համար, Փիթեր Նաջարյանի ստեղծագործություններում (Najarian P., Voyages, New York 1980, Daughters of Memory, City Miners and Books, 1986): Ի վերջո պետք չէ մոռանալ, որ յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետ իր էությամբ հումանիստ է եւ ունակ պահպանելու մարդասիրության զգացումը՝ անկախ այն բոլոր զազրելի երեւույթների, որ ինքը տեսել է շուրջ բոլորը: Համաձայնենք, որ բնավ դյուրին չէ պահպանել մարդասիրության զգացումը, եթե դառնում ես պատերազմի կամ ցեղասպանության ականատեսը եւ դրա զոհը: Բացի մարդասիրությունից՝ Սյուրմելյանին բնորոշ են նաեւ անկողմնակալությունն ու օբյեկտիվությունը: Հենց այս որակների շնորհիվ է, որ ամերիկահայ գրողը չի ձգտում վատաբանել ողջ թուրք ազգին: Բանն այն է, որ գրողը հասկանում է մի պարզ ճշմարտություն. չկան եղեռնագործ ազգեր, կան եղեռնագործ մարդիկ: Ի ապացույց ասվածին՝ հիշենք մեր օրերում ապրող այն առաջադեմ թուրքերին, ովքեր բնավ չեն ժխտում հայոց ցեղասպանության փաստը, անհարմար են զգում իրենց նախնիների գործած ոճրի համար եւ հայցում են հայ ազգի ներողամտությունը: Ինչեւէ, սխալ կլինի ասել, թե թուրք ժողովրդի մեծամասնությունը կիսում է վերը նշված դիրքորոշումը: Ի վերջո յուրաքանչյուր ազգի մեջ խավարամոլների թիվը գերազանցում է կրթված եւ լուսավորյալ անձանց թվին: Այս ճշմարտությունը քաջ գիտակցում է հենց ինքը՝ Սյուրմելյանը եւ դրա մասին գրում է իր «Ձեզ եմ դիմում, Տիկնա՛յք եւ Պարոնա՛յք» վեպ-հուշագրության մեջ: Նա փայլուն կերպով նկարագրում է թուրք խառնամբոխին, որը չարությամբ ու ատելությամբ էր լցված օտար ազգերի՝ մասնավորապես հայ ժողովրդի հանդեպ: Ահա դա էր պատճառը, որ հայոց եղեռնի շրջանում ապրած թուրքերի մի զգալի մասը կուլ տվեց երիտթուրքերի գցած խայծը, ենթարկվեց նրանց սադրանքին եւ ձեռք բարձրացրեց հայ ժողովրդի վրա:

*Շարունակելի*

***Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ***

***Բանասիրական գիտ. թեկնածու***

# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ...

*Սկիզբը՝ էջ 6*

*Հոգի՛, աչերուս իմ լոյս,*
*Դո՛ւ ես հոգի իմ հոգոյս...*
*Կարմիր լի գունով վարդ ես,*
*Ամէն շաղկունանց զարդ ես...*
*Քո սիրոյդ հիվանդ եմ ես,*
*Հէքիմ եւ ճարակ դու ես...*
*Ինչ արեգական լուսն ես,*
*Ծաղկունանց սուլթան դո՛ւ ես...*
*Շաքար ու շիրին շրթունք...*
*Թուխ աչեր ու կամար ունք...*
*Լեզուդ հրեղէն քաղցր է,*
*Խօսիւք անուշ շաքար է...*



Բայց նա փախչում է, բանաստեղծին տեսնելիս ծածկվում, «դպնահատվում» ու «նամուսով» է դառնում, մինչդեռ այլոց համար՝

*Լուսին սուրաթով լուս ես,*
*Պատրես ու թամամ ելնես,*
*Չիս տեսնուս՝ ի մայր մըտնում...*
*Երբ որ քո գերիդ տեսնուս*
*Շատ դիպն ու նամուս առնուս...*

Երզնկացին անհանգիստ տենդի մեջ է: Նա, հանգիստ ու քուն կորցրած, արյուն-արցունք թափելով, «գիշեր ու ցորեկ» ամենուր փնտրել է իր Մորճին: Խնդրում է, որ սիրած էակը խղճա իր գերուն.

*Գիշեր ու ցորեկ արթուն,*
*Ո՞նց անեմ վարդին սիրուն՝*
*Չունիմ հանգիստ եւ կամ քուն.*
*Խղճա՛ քո գերոյս, իմ լոյս:*

Բանաստեղծը դառնում է «աշըղ» եւ սիրած յարին հազար բերան գովք ասող «պլպուլ»: Բայց «պլպուլը» վախենում է, որ այլեւ նրան չի տեսնի: Նրա սրտի դեղ ու ճար դառած էակը հեռացել է եւ բանաստեղծին թողել «պէումէտ» վիճակում: Ծնվում են անհույս սիրո ծանր հույզերը, դառը ապրումները եւ մտորումները: Խելքը կորցրած սիրահարը ամեն տեղ իր սերն է փնտրում, իր միակ բուժիչ դեղը՝ թեկուզ գեթ մեկ անգամ երեւա եւ խոսի իր հետ.

*Ի դաշտ՚ւ ի լերունք ելնես,*
*Շուրջ գամ ու հարցանեմ զքեզ...*
*Դու դեղ իմ սրտիս առնես,*
*Թէ զտեսդ աչերուս օժտես...*
*Երբ որ քո գերիդ տեսնուս,*
*Շատ դիպն ու նամուս առնուս,*
*Խօսէ դու յիս հետ մեկ կոյս.*
*Խղճա՛ քո գերոյս, իմ լոյս:*

Ծավալվում է բանաստեղծի ողբերգությունը, դրաման հասնում իր գագաթնակետին.

*Թէ զիս պէումէտ թողուս,*
*Չ՚ատամ թէ այլ զիս տեսնուս,*
*Հոգիս ելաւ ի մարմնոյս,*
*Ար-եկ աչերուս իմ լոյս:*
*Խիստ խղճուկ եմ ու անյոյս,*
*Կու ծըփամ ի մէջ ծովուս,*
*Չերեւիր եղերն ճամփուս,*
*Ար-եկ աչերուս իմ լոյս:*

Այնուամենայնիվ, սերն այնպես բյուրեղացած նրբությամբ ու քնքուշ, հոգեզմայլ ու զգլխիչ ապրումներով երգող բանաստեղծի հոգեաշխարհում մի խորին ու անհուն, կարծես անըմբռնելի հավատ կա. Իր հոգին, աչքերի լույսը հանկարծ կգա, կխղճա իրեն ու չի թողնի, որ տառապանքի ծովի մեջ անհույս, սեր չապրած ու դառնագին կարոտով լողա եւ այդպես էլ հեռանա:

Եվ այստեղ մեծ քնարերգուին վայել բարձր վարպետությամբ ու նրբությամբ արտահայտվում է խոցված, բայց անհատնելի սիրո հառաչը.

*Հոգի՛ս, աչերուս իմ լոյս,*
*Երբ որ ի դիմացս ելնուս՝*
*Է՞ր փախիս ի տուն մտնուս.*
*Ար-եկ աչերուս իմ լոյս:*

Սա բոլոր մեծ քնարերգուների հավիտենական կանչն է՝ ուղղված իրենց սրտի տիրոջը՝ առեղծվածային ու անիմանալի կնոջը:

❖❖❖

Իր ժամանակակիցներից չհասկացված ու խոցված բանաստեղծն անցել է տառապանքի բոլոր ճանապարհներով... Հակասության մեջ է մտել միջավայրի հետ, արհամարհանքով տարել անգետ-անմիտների հալածանքներն ու քարկոծումները, հոգով հաղթանակած կյանքով ու գործով գարնան հարավային հողմ դարձած՝ երգել է բնություն, առավոտ, լույս, սեր... Սիրել է, ընկել անհաս սիրո ծովը, անհուսության դառն ու ցավագին պահեր ապրել, հիացել առկայծումներով, ցնծացել սիրած կնոջ երեւալով, սքանչացել աշխարհի բնության հավերժական գեղեցկություններով, իր հոգու գաղտնարաններից դուրս հանել գրական անգերազանցելի գանձեր, նվիրել մարդուն ու գալիք ժամանակներին:

Չարով շրջապատված ու չարից խոցված բանաստեղծը ցույց է տվել բարության ճանապարհը, ինքն էլ այդ ճանապարհին արարել բարին...

***Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

# Նարեկյան խոսքի մետաֆորիկան...

*Սկիզբը՝ էջ 6*

ԻԷ ԽՕՍՔ

*«Դուրսէն ծեփուած պատ մ՚եմ աղտոտ. զարդարուն մէկն եմ սնոտի պարծանքով. լոյս մ՚եմ մութի դարձած. թշուառացած աչք մ՚եմ որուն մէջ գերան կայ. փառքի ջահ մ՚եմ՝ մարած»* (նույն տեղում, ԻԷ Խօսք)

ԼԹ ԽՕՍՔ

*«Քաղաք մ՚եմ որ ո՛չ պատուար ունիմ, ո՛չ ալ մահարձան. տուն մ՚եմ՝ դռնփակ ամրութիւններէ զրկուած. աղ եմ, տեսքով՝ չէ թէ համեղութեամբ. ջուր մ՚եմ աղտոտ, ծարաւիներէ չխմուելու աստիճան անախորժ. գետին մ՚եմ, հերկուելու անընդունակ. սահման մ՚եմ լքուած եւ ճախճախուտ մը՝ կնիւններով պաշարուած. խոպանացած արտ մ՚եմ ուր փուշ ու տատասկ միայն կը բուսնի»* (նույն տեղում, ԼԹ Խօսք):

Բանաստեղծներն ու գրողները սովարաբար տանում են համեմատականներ մարդկանց եւ կենդանիների միջեւ՝ նպատակ ունենալով ընդգծել որոշակի առանձնահատկություններ, աչքի ընկնող բնավորության գիծ կամ տաղանդ: Փոխաբերությունն արտացոլում է հեղինակի վերաբերմունքը տվյալ անձի նկատմամբ: Նա համեմատում է մարդուն կենդանու հետ՝ առանձնացնելով նրա յուրահատկությունը կամ ընդգծելով նրա դրական կամ բացասական կողմերը: Օրինակ՝ Ջերալդ Դարրելը, իր ստեղծագործությունների մեջ նկարագրելով մարդու հոգեվիճակը, առանձնացնում է աչքի ընկնող որոշակի գծեր՝ դրանք համեմատելով կենդանու հետ, ինչի արդյունքում մարդկային պատկերը դառնում է ավելի վառ եւ հիշվող: Այդպես, օրինակ, համեմատելով կնոջը ծեր ձիու հետ, հեղինակն ընդգծում է կնոջ թախիծը, տխրությունը, փհատությունը: Այսպիսի կոնցեպտուալ մետաֆորա կարող ենք տեսնել նաեւ «Նարեկի» ԻԲ Խոսքում.

*«Խօսող ձի մ՚եմ, դժուարասանձ, երեսանը քակուած ու սանձը կոտրած. աւանակ մ՚եմ խեռ, վայրենի եւ անկիրթ. երինջ մ՚եմ անընտել, անուղղայ եւ անվարժ: Մարդ մ՚եմ մոլեգնած, տարագրուած ու կորուստի մատնուած. տղայ մ՚եմ յանցաւոր, փողոցային եւ չխրատուող. տնտես մ՚եմ մահապարտ, անճարակ եւ անգործ, բանական մ՚եմ անմաքուր՝ գազանի եւ անասունի բնաւորութեամբ»* (նույն տեղում, ԻԲ Խօսք):

Այստեղ տեղին է մեջբերել հիվանդներից մեկի խոսքը Նարեկի մասին.

*«ՆԱՐԵԿ», մի հզոր գիրք, որ օգնեց ինձ կենդանական մակարդակից բարձրանալ մարդկային վիճակի... չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ ավելի ներքեւում էի, քան անմեղ ու անբանական կենդանիները... նրանք ունեն գոյատեւման բնական բնազդ, իսկ ես՝ ինքնակործան սովորություններ, նրանք ունեն ինքնապաշտպանական բնազդ եւ չեն «սնվում» այն ամենով, ինչ առաջարկվում է, իսկ ես, բոլորովին զուրկ լինելով ինքնապաշտպանությունից, ընդունում էի այն ինֆորմացիան, գաղափարախոսությունը, արժեքները, ինչն առաջարկվում ու մատուցվում էր... ի վերջո, կենդանիները չեն ատում, չեն ստում, չեն հպարտանում, չեն բամբասում...»*:

***Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ***
***Բժշկական գիտ. թեկնածու***

# Նոր, բայց արդեն հաղթանակած

Եկեղեցին, մասնավորաբար եկեղեցական արարողությունները հնարավոր չէ պատկերացնել առանց երգեցողության ու երաժշտության: Իհակե, բացառություն չէ նաեւ մեր Եկեղեցին. մենք ունենք դարերով ձեւավորված, հղկված, մշակված ու բյուրեղացված հոգեւոր-եկեղեցական երաժշտություն, որն, ի դեպ, որոշակիորեն ազդել է եվրոպական հոգեւոր-եկեղեցական երաժշտության վրա: Բնականաբար, հոգեւոր ուսումնական հաստատություններում, ի շարս այլ առարկաների, պետք է ուսուցանվի երգեցողություն ու երաժշտություն: Այդպես է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, որը մեր հանրապետության ամենահին եւ, չեմ վախենա ասել, ամենաորակավոր բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Ճեմարանում, սակայն, չեն բավարարվում երգեցողություն ու երաժշտություն ուսուցանելով. այստեղ գործում է երկու երգչախումբ՝ մեծ եւ «Էջմիածին»: Մեծ երգչախումբը ճեմարանի առաջին ու կարեւոր երգչախումբն է, հիմնադրել է Կոմիտասը: «Էջմիածին» երգչախումբը՝ փոքր կազմով, հիմնադրվել է հենց վերջերս՝ 2015 թ.՝ ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի նախաձեռնությամբ եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ: Երգչախմբի հիմնադիր-խմբավարն է Մայր Աթոռի միաբան, ճեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս Արթուր սրկ. Վարդանյանը: «Երբ 2015-ին ճեմարանի տեսուչ նշանակվեց հայր Գարեգինը,- ասում է Արթուր



սարկավագը,- կարծես երկուսիս գաղափարն էլ մեկն էր՝ ունենալ փոքր երգչախումբ, որին տեղաշարժելն ավելի հեշտ կլինի»:

Խումբն ստեղծելու համար ճեմարանում եղել են լսումներ, ընտրվել առավել համապատասխանող ձայներ եւ կազմվել տասնվեց հոգանոց փոքր երգչախումբ: «Սկսել ենք կոմիտասյան մշակումներից,- ասում է հիմնադիր-խմբավարը,- անշուշտ, հոգեւոր երգերը՝ շարականներն են առաջնայինը, բայց քանի որ Կոմիտաս ասելով հասկանում ենք թե՛ հայ հոգեւոր եւ թե՛ հայ աշխարհիկ երաժշտությունն ամբողջությամբ, ուստի չանդրադառնալ ժողովրդական երաժշտությանը, մանավանդ Կոմիտասի մշակումներին, անհնարին կլիներ. ինքը՝ Կոմիտասը, ճեմարանի ծնունդ էր, նույնիսկ հատուկ մշակումներ է արել ճեմարանի երգչախմբի եւ ուսանողների համար: Երգչախմբի երգացանկը բազմազան է: Աշխատում ենք անդրադառնալ նաեւ արեւմտաեվրոպական ստեղծագործություններին, ռուս հոգեւոր երաժշտությանը: Առավելությունն այն է, եւ փառք Աստծո, որ այդպես է, ես ճեմարանում դասավանդում եմ եկեղեցական երաժշտություն եւ մտնում եմ բոլոր լսարանները: Առհասարակ ուշադրություն եմ դարձնում երգեցողությանը, իսկ առանձնահատուկ ուշադրություն՝ «Էջմիածին» երգչախմբի տղաների երգեցողությանը, որպեսզի մեր փորձերը հնարավորինս արդյունավետ լինեն»:

Երգչախմբի անդամներն առանձին անդրադառնում են երգերի բառերին, ստեղծագործությունների բովանդակությանը, ոչ միայն երգում են, այլեւ բառերի շնորհիվ հասկանում երաժշտության ոգին: Պարբերական փորձերը երգչախմբի անդամներին ավելի են մտերմացնում, ավելի ջերմ հարաբերություններ են հաստատվում նրանց միջեւ: Փորձերը տեղի են ունենում դասերից ազատ ժամերին՝ 15-17-ը ընկած հատվածում:

Միջոցառումներից մեկի ժամանակ հայր Գարեգինը հայտարարեց, որ ելույթ պիտի ունենա «Էջմիածին» երգչախումբը: Դա իր մտածած անունն է. այս անվանադրությունը շատ ուրախացրեց երգչախմբին ու նրա հիմնադիր-խմբավարին, որովհետեւ գոնե մինչեւ հիմա «Էջմիածին» անվամբ երգչախումբ չի հանդիպել:

Գործունեության կարճ ժամանակահատվածում երգչախումբը հանդես է եկել մի շարք ելույթներով՝ ինչպես ճեմարանում, այնպես էլ Հայաստանի տարբեր թեմերում եւ Երեւանի տարբեր համերգասրահներում՝ ամենուր արժանանալով հանդիսականի ջերմ վերաբերմունքին ու բարձր գնահատանքին:

Ամիսներ առաջ՝ այս տարվա փետրվարին, երգչախումբը Բելոռուսի Հանրապետության Գրոդնո քաղաքում կայանալիք «Կոլոժսկիյ բլագովեստ» (Կոլոժյան ավետիս) հոգեւոր երաժշտության 16-րդ միջազգային փառատոնին մասնակցելու հրավեր ստացավ, եւ քանի որ թռիչքը լինելու էր Մոսկվայով, իսկ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմն այս տարի նշում էր հիմնադրման 300-ամյակը, երգչախումբը որոշեց փոքրիկ ընծա մատուցել Ռուսիո մայրաքաղաքի հայ համայնքին՝ նրանց հրամցնելով գեղեցիկ կատարումներ: Համերգներ են եղել նաեւ Զագորսկ կամ Սերգեւ Պասատ քաղաքում: Բելոռուսում երգչախումբը ունեցել է երեք ելույթ: Մրցույթի ժյուրին միջազգային էր՝ բաղկացած տարբեր երկրներ ներկայացնող տասներկու մասնագետներներից: «Շատ մեծ հավանականություն չէի տեսնում հաղթելու, բայց, փառք Աստծո, տղաները կարողացան արդարացնել իրենց, վերջին ուժերը ներդրեցին, եւ երկրորդ մրցանակին արժանացանք այդ միջազգային փառատոնում»,- ասում է Արթուր սարկավագը: Եթե հաշվի առնենք, որ առաջին մրցանակի արժանացել է մասնագիտացված երգչախումբ, ապա կարող ենք ասել, որ մերոնց ստացած երկրորդ մրցանակը, ըստ էության, առաջինն է:

Երգչախումբը թողարկել է մեկ տեսասկավառակ՝ «Արեւագալի երգեր» խորագրով:

Ընդամենը երկու տարեկան այս երգչախումբը ոչ միայն արդեն ապահովել է որակական բարձր մակարդակ, այլեւ հասել բազում հաջողությունների, որոնցից ամենատպավորիչը, թերեւս, օտար հողում տարած հաղթանակն է:

***Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (Արմենյան)***
***Բան. գիտ. թեկնածու***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

**web կայք՝**
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.6.2017 թ..

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**